# ԱՍՏՎԱԾ ՈՒԶՈՒՄ Է ԽՈՍԵԼ ՔՈ ՀԵՏ

Լսո՞ւմ Ես Ինձ Հիմա

Մաս 1

Հիսուս: *«Ով որ լսելու ականջ ունի՝ թող լսի:»* Ղուկաս 8:8

## Ինչո՞ւ Է Կարևոր, Որ Լսենք Աստծու Ձայնը

* Այն հաստատում է, որ ես պատկանում եմ Աստծո ընտանիքին

*Հիսուս: «Իմ ոչխարներն <u>իմ ձայնը լսում են</u>, և իմ ետևից գալիս են:»* Հովհաննես 10:27

* Այն պաշտպանում է ինձ սխալներից

*«Քո բոլոր ճանապարհներումը ճանաչիր նրան, և նա կուղղի քո ճանապարհները:»* Առակաց 3:6

* Այն մղում է ինձ անձնական առաջադիմության

*«Իմաստուն կանեմ քեզ, և կսովորեցնեմ քեզ <u>այն ճանապարհը, որ նրանում պիտի գնաս.</u> կխրատեմ քեզ՝ իմ աչքը քեզ վրա կլինի:»* Սաղմոս 32:8

## Պատրաստվել Աստծու Ձայնը Լսել

Սերմնացանի Առակը – Ղուկաս 8:4-15

### 1. Զարգացրու բաց մտածելակերպ

*«Սերմ ցանողը դուրս գնաց իր սերմը ցանելու. և նա սերմելիս՝ որը <u>ճանապարհի մոտ ընկավ</u>՝ և կոխվեցավ, և երկնքի թռչունները նրան կերան:»* Ղուկաս 8:5

*«<u>Ճանապարհի մոտինն</u> էլ նրանք են, որ լսում են և հետո սատանան գալիս է և խոսքը նրանց սրտիցը հանում է, որ չհավատան և փրկվեն:»* Ղուկաս 8:12

### Ամուր հողը = Փակ մտածելակերպ

Երեք պատճառներն են

*Հպարտություն *Վախ *Դառնություն

*«Ամեն աղտեղություն և չարության առավելությունը դեն գցեցեք, և <u>խոնարհությունով ընդունեցեք</u> ձեր մեջ սերմված խոսքը, որ կարող է ձեր հոգիները ապրեցնել:»* Հակոբոս 1:21

### 2. Ժամանակ հատկացրու Աստծուն լսել

*«Եվ ուրիշը <u>ապառաժի վրա ընկավ. և բուսնելու ժամանակին չորացավ</u>՝ հույթի պակասության պատճառովը:»* Ղուկաս 8:6

*«Ապառաժի վրայիններն էլ նրանք են, որ երբոր կլսեն, խոսքը ուրախությունով ընդունում են. սակայն սրանք արմատ չունեն. մի առ ժամանակ հավատում են, բայց փորձության ժամանակին հեռանում են:»* Ղուկաս 8:13

### Ծանծաղ հող = Մակերեսային մտածելակերպ

*«Եվ չթողենք մեր <u>իրար հետ ժողովելը</u>, ինչպես ոմանց սովորություն է. բայց իրար հորդորենք:»* Եբրայեցիս 10:25

### 3. Վերացրու արգելքները

*«Եվ <u>ուրիշն ընկավ փշերի մեջ</u>, և փշերը նրա հետ բուսան և խեղդեցին նրան:»* Ղուկաս 8:7

*«Փշերի մեջ ընկնողն էլ նրանք են, որ խոսքը լսած են լինում, բայց <u>հոգսերից և հարստությունից և կյանքի զվարճություններից</u>՝ <u>գնալով խեղդվում են</u>, և անպտուղ են լինում:»* Ղուկ 8:14

### Մոլախոտոտ հող = Հոգսալից մտածելակերպ

*«...մի մեղմ ու նուրբ ձայն:»* Գ Թագավորաց 19:12

### 4. Համագործակցիր Աստծո ասածին

*«Բայց այն պարարտ հողի միջինը, նրանք են, որ բարի և հոժար սրտով խոսքը <u>լսում</u> և <u>ընդունում</u> են, և համբերությունով <u>պտուղ</u> են տալիս:»* Ղուկաս 8:15

### Պարարտ հող = Կամեցող մտածելակերպ

*«... բարի և հոժար սրտով խոսքը <u>լսում</u> և <u>ընդունում</u> են, և համբերությունով <u>պտուղ</u> են տալիս:»* Ղուկաս 8:15

Հաջորդ Կիրակի

## ԻՆՉՊԵ՞Ս Է ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ ՔՈ ՀԵՏ

Հովիվ Սարօ Խաչիկեան